

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ



ՀԱՅ ԵՐԵՒԵԼԻՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԽՈՎՈՎԱԿԱՐՆԵՐԸ, ԶԵՐԱԳԻՐՆԵՐԸ
ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒՆ. ԵՒՆ.

1512-1912

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

ԳԵՂԱՐՈՒԽԵՍՏԱԿԱՆ ՀԳԵԴ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԱՐ


ԿԱԶՄԵՑ

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԳՐԱԿ ԻՐ

117.	Յովհաննես Ամիրյան Տաման	3	Պատկեր
118.	Միշայէլ Ժայռ Փայրուզալ	1	-
119.	Ազրին պէջ Տամին	2	-
120.	Մատթէոս Այզմանոս	2	-
121.	Գևիզու Սղիմոնոս	2	-



ՀՐԱՏԱՐԱԿԻՑ

Վ. Ե. Պ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՊԲՈՒՔ
Խ. Գ. Շ. Լ. Խ. Ա.

ՀՊԳՐ. ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1912

Յովհաննես Այզմանոսի ծովանդախիչ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

ԵՐԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊԵՏ ՏԱՏԵԱՆ

ՎԱՐՈԴԱՊԵՏ

1789-1869

Մեքենագիտական ճիւղին մէջ իր օգտակար աշխատութիւններով հանրածանօթ , Օսմ. կառավարութեան այնքան օգտակար ծառայութիւններ մասուցանող և Ազգին ու հիւանդանոցին սասարող Յովհաննէս Տատեան ծնած է Պոլս Աղասիլը դիւղին մէջ 1789 Փետրուար 4ին :

Իր հայրը Տատ Առաքել Ամիրա՞ն որ վառոդապիտ էր , ջանաց խնամեալ կրթութիւն մը տալ իր զաւկին և զանազան ուսուցիչներու և Միփթարեան Հայրելու գասարակութեամբ կրթեց իր զաւակը :

1813ին իր հօր մահուցմէն յետոյ Յովհաննէս լը մտնէ վառոդարանի ծառայութեան մէջ :

1820ին Պէջքօզի թղթի գործարանին տեսուչ կ'անուանուի , այս գործարանոր հաստատած էր Առաքել անուն հայ մը որ Վիեննայի մէջ սովորած էր այդ արհեստը :

1829ին կը թողու թղթի գործարանը և կը նարէ հրացանին երկաթները ծակելու մեքենայը :

1832 Մարտ 7ին իր եղբօր մահէն Յ օր ետք լայս . Իրատէով Յովհաննէս պէյ Աղասիլի վառոդարանին վառոդապետ կ'անուանուի :

Յովհաննէս պէյ այդ ալաշտօնին կոչուելէն Իտք սոյն պաշտօնարան՝ յօժտուի եւրոպական Յիւատակարան

նորագոյն վասումնասիրութիւններէ : 1835ին ճամբորդութիւններ ալ կ'ընէ Եւրոպա , ուր նո-



294.— Յովհաննէս պէյի Երիտասարդութեան պատկերը
րանոր կատարելագործումներէ և գիւտերէ կ'օգտուի և 1836ին կը վերադառնայ ի ձեռին ուսնենալով վկայականներ :

Ի դարձին կը վերակազմէ իրեն յանձնուած գործը, ասկէ զատ իր վերասեսչութեամբ կը կառուցուի Պէյքօզի խաղախսրդի գործարանը, Նիկոմիդիոյ չուլայի գործարանը, Հէրէքէ

Յովհաննէս պէտ ի քմթիսարի և Աւլայի պատ-
ւանշանով և ասաիծանով արժանացած է պէ-
տիթեան տիտղօսին և Եւրոպական քաջալե-
ռութեան ընկերութիւններու անդամ՝ լու-

Sept. 1863 - 24000

Uteb. 3. 1919. *Sphaerophorus* johannae.

295.— Յովիաննէս պէջի ձեռագիր նամակ

մետաքսեալ կերպամներու և ԶԵՂՋՈՒՆ Պուրնուի ըռւած է :

երկաթ ձուլելու գործարանները : ևն . որոնց
մեջինաները բերելու համար 1842 և 1847ին
կրկին Եւրոպա կը ճամփորդէ :


1856წნ სტროუმ ხან მარბროვის ათხელის
+ 1857წნ ალ ჩამარაჭალე კრისტენი ფილიპი
ამაგანთ წერილია და ასე დასრულდა.

Սուլթան Մէջիր բարեցիշատակ կայսրը չափազանց գոհ մասնավ Անոր գործունէութենէն քանիցու վարձատրել ուզած է զինքը սակայն ինք ճշմարիտ ազգասէր մարդ միակ վասիաքը ունեցած է Հիւանդանողի հացի և մսի պարէններուն յաւելումը և դժոխան բարեգործական գործեր :

Հիմնած է Ազատլի և Մաքրիգիւղի Ս. Աստուածածին եկեղեցիները . նարը գալուի

խաղբառւելով ի Մաքրիգիւղ թաղուեցաւ իր չփնած եկեղեցւոյն շրջափակին մէջ :
Անի անտիպ հեղինակութիւններ :
իր չինել տուած եկեղեցիներու մասին ունինք հետեւեալ ծանօթութիւնները .

Ազատլի .— Այս եկեղեցւոյն հիմնարկութիւնը տեղի ունեցած է 1835 Յուլիս 28ին՝ Ստեփանոս Աղաւնի Պատրիարքի օրով . Յովհաննէս



296.— Յովհաննէս պէյի ծերութեան պատկեր

և Մաքրիգիւղի վարժարանները և իզմիտի մէջ դպրոցներ, անդամ եղած է 1847ի և 1853ի Ազգ . գերագոյն ժողովներուն :

Վեհսեակիի Միթթարեան միարանութեան մեծանարուստ նուէրներ լրած է և շատ մը գրքեր և քարտէմներ ապել տուած է :

Յովհաննէս Պէյ Տատեան 1869 Ապրիլ 18ին իր մահամացուն կնքեց Պէտքթաշի մէջ և վո-

Ամիրա Տատեան ի յիշատակ իր հօրը՝ շնութեան բոլոր ծախքերը տուած է, օծումը կատարուած է 1837 Ապրիլ 25ին :

Մաքրիգիւղ .— Ահա արձանագրութիւնը այդ եկեղեցւոյն «կառուցաւ յանուն Ս. Աստուածածնայ եկեղեցիս արքեամբ Տատեան աղնուազարմ Յովհաննէս պէյի յամի Տետոն 1844 Ապրիլ 7, 1889ին իր ժառանգորդները հիմնեցին

Ազգ . վարժարանը՝ որ անկէ ի զեր կը կռչաւի
Տատեսն վարժարան :

Իր արժանաւոր զաւակն էր Յարութիւն փա-
շա Տատեսն որոյ մասին սլունի խօսինք ըստ
կարգին :

ԱՊՅԻՒԹԻՆԵՐ.— Բազմավեպ 1869 եջ 160 եւ

1884 եջ 59 . — Արշաբյու արարատիան 1844 թ.
174 եւ 175 . — Մասիս . Մանզումէ 1869 . — Ըն-
դարձակ օրացոյ (1900) եջ 143 . — Սուրհանդակ
1900 Ապրիլ 7 . — Քեշեան, պատմութիւն Հիւան-
դամոցի (1888) . — Կենսգր . Պեղինանի (1863) . —
Մատենագիտութիւն (1882) են . են .



ՄԻՔԱՅԵԼ ՓԱՇԱ ՓՈՐԹՈՒԳԱԼ

1842-1897

Հմուտ անտեսագէտն և Կայսերական Անձ-
նական Գանձուն նախարարն Միքայէլ փաշա
ծնած է 1842ին Օրթագիւղի մէջ, զաւակն էր
Փարթուգալ Յովսէիփ որ փողերանոցի մէջ պաշ-
տօնեայ էր և իր զիւղին մէջ պատուաւոր անձ-
նաւորութիւն մը : Միքայէլ իր նախնական ու-
սուումը Օրթագիւղի Հայ Կաթոլիկ վարժարանին
մէջ ստանալէ ետք, աշակերտած է նաև մե-
ծանուն Պէլիքթաշլեանի : 1852 ին կ'անցնի
Փարիզ, ուր Մուրաստեան վարժարանի մէջ
կը ստանայ իր բարձրագոյն ուսուումը աշակերտե-
լով Հ. Այլազովսկի, Թրեանցի, և Ալիշանի .
սիրելի հանդիսանալով սնանց՝ իր ջանասիրու-
թեամբ :

Պօլիս վերադառնալով գնահատուեցաւ բարձր
գասակարգէն և գաստիարակ կարգուեցաւ
անոնց զաւակաց, իր լիզուագիստութեամբ պե-
տական անձանց ուշագրութիւնը գրաւեց և Բ.
Դրան մէջ թարգմանի պաշտօնին կոչուեցաւ,
ատեն մը ետք նոյն պաշտօնով կրետէ զնաց
Մեծ Եպարքսո Ալի փաշայի հետ : Այդ պաշ-
տօնին մէջ յաջողութիւն ցոյց ատալով վերադար-
ձին մեծ թոշակով Պօլսոյ մաքսատան վերա-
տեսչի օգնական եղաւ և սոյն գործին մէջ մե-
ծամիծ ծառայութիւններ մատոյց տէրութեան
իր հարագէտ հանձարովը, որովհետեւ ինք
ծրագրած էր լուսաբաց գրոշմի և դրոշմաթուղ-
թի օրէնքը, որով անհամեմտա կերպով տւել-
ցաւ տէրութեան զանձը : Գրեթէ 12 տարի
շարունակ հաւատարժարար ծառայելով մաք-

սային գործերու մէջ աւելի բարձրագոյն դիր-
քի արժանացաւ անուանուելով խորհրդական
Ելեւտիսի նախարարութեամ :

Սոյն պաշտօնին մէջ ևս ցոյց տալով անձ-
նուէր գործունէութիւն վեճ . Սուլթանի յանձ-
նաւարութեամբ Երկրագործական Դրամատուն
մը հաստատեց որուն վերաստուչ անուան-
ուեցաւ . մեծ աշխատաթիւն թափած է այս
ձեռնարկին համար և յաջողութիւն ձեռք բերած
է արքունի գարոցներու ուսուցչութեամբ իր
հայոցացած աշակերտները ծառայեցնելով նոյն
հաստատութեան մէջ :

Սոյն պաշտօնավարութեան միջոցին ցոյց
տաւած յաջով գործունէութիւնէն, աէրութեան
բարձրասափան անձանց ուշագրութիւնը գրա-
ւելէն զատ, Սուլթանին ալ մեծ համարման ար-
ժանացաւ որ Յակոբ փաշա Գալագեանի մահ-
ուսնէն ետք մաստանց զինքը նախարար Անձ-
նական դանձուն :

Քիչ ետք լնդունեցաւ վէզիրութեան բարձ-
րագոյն ասաիճանը, ունէր նաև Օսմանիէ,
Մէծիահէ, Խմբիսազի սակի և արծաթ և ուրիշ
տէրութեանց բազմաթիւ պատուանշանները :

Այս բարձր պաշտօններէն զատ ունէր նաև
ուսմանց բարձրագոյն հակողութեան պաշտօնը
Կայսերական իշխանաց վրայ :

Կարճ եղաւ մեծ անուան ելեւ մատագէտն կեան-
քը և 1897 նոյեմբեր ինի կնքեց իր մահկանո-
ցուն . իր յուղարկաւորութիւնը «համազգային

վշտի բնդկանուը արտայայտութիւն մը և ողաւ» .
կը գրէր Բիւզանցիոն :


Անա թէ ինչ կը գրէ Հ. Յովհ. Թորոսեան
Քաղմալիքի (1898) առաջնո՞ւպրակին մէջ :

«Մեծ և նշանաւոր անձանց աշխի զարնող
թերութիւն մէկ բարձրամասութիւնն , որով ի-
րենցմէ գուրու ուրիշ մեծ և բարձր րան չեն
անաներ , արհամարհուա աջօք կը նային իրենց
չուրքը , միշտ ամսվերով ծածկուած՝ անմասանե-
լիք նու այլը՝ . — այդ թերութիւնը չունէր Մի-
քայլ փաշա : Բնասնին էր այն ամենուն նեան
որք իրեն կը մօնանային . չդիմահմ ինչպահ չը-
նորհք մի կը փալքէր նորա բոլոր անձին վերաց ,
որով կը մեղմէր իւր գէմքին վերաց բնութեան
գծած լրջութիւնը կամ խոսութիւնը , — աղ-
ուսութիւն մի՛ որով սիրելի էր ամենուն՝ ա-
ռանց պատկառանքէն բան մի պակասցնելու :
Հաստատամիւա էր՝ առանց յահասա լինելու , ինչ-
պէս կը վկացն զինքը չոտ մօտէն ճանաչողք ,
մանա անու եկր բանի խորը քննելով՝ իմանուամ
էր նորա ճշգութիւնը , պէտք էր որ իր ասածին
վրայ հաստատ մեարք : Արդար և անաշուա էր
նու զնուասելու մէջ ուրիշի արժանիքը կամ ոչ .
չդիմէր ճերմակին սեւ բաել կամ սեւին ճեր-
մակ , թէն իւր բարեկամը լինէր կամ թնամին :
Երբեք նա կենաց մէջ հնասանուա եղած չէ
պատասց , պաշտօններու , — յիրաւի հազուա-
զիււա առաքինութիւնն աշխարհի վերաց , — բնդ-
հակառակին կը փախչէր անսնոցմէն ինչպէս մարդ-
իւր սառեկին , և նոքա միշտ իւր ետեւէն կը
վագէին և կը հասնէին : Այդ ընթացքին մէջ
երբեք մասն ունեցած չէ բախան , կամ ուրիշ
մարդկային հնարքներ : այլ լոկ իւր ճիրքերն
հաւասարիմ ծառայութիւնն և միք գործնէու-
թիւնն եղան սր զինքը այնչափ բարձրացուցին :

Եթէ իրցաւ օարաց զաւակներուն ճարտար
լրասաբարակ լինել , կրնանք երեւակայի թէ
ինչպիսի եղաւ իրեններուն . այդ յայտնի է նո-
րա ընասանիքը մօտէն ճանաչողներուն : Անկեղ-
ծութիւնն իւրսէ անբաժանն էր՝ ինչպէս իւր
չուքն . խօսքը՝ մասց թարգմանն էր , գէմքը՝
սրտին . կ'ըսէր ճշմարտաթիւնը՝ ուր որ հարկ էր ,
զի ոչ մէկէ երկիւղ ունէր և ոչ շահ . որուն որ
կարող էր՝ բարփք կ'ընէր , իսկ ուր չէր կարող՝
սնուափ խօսամամբք կամ յոյսերով չէր խօրեր
դայլս : Ամէն գործի մէջ իրեն առաջնորդք ընտ-
րած էր խորդը , և նպաստակ հաստրակաց օգուատը
և անձին սայդ պատիւը : Հաւասարապէս թէ
իւր պաշտօնական գործերուն և թէ պարտուց

մէջ ճիշդ էր և վերին ասաիմանի կարգապահն ,
և չկիսէր ձգձգել ուշացնել զանոնք . նոյնի կը
պահանջէր նու և իւր սարակարգ պաշտօնեա-
ներէն :

Միքայէլ փաշա՝ իւր ունեցած բազմակող-
մանի հմատութեամբն ևւս՝ ազգերնուս մէջ հաղ-
ուագիւտ անձերէն մին էր . և աս կը կազմէ իւր
երրորդ ասւակըութիւնը : Թափանցող և սուր
միաք , խօսակցութիւնը՝ յատակ և արամաբան ,
ձայնը՝ հնչուն և զօրաւոր , ոճը՝ սկզմ և ախոր-
մելի , գէմքը՝ վեհ , և կերպը՝ ծանր : Այս ամէն
բան ի մի զալով , խօսած պահուն՝ անդրացի
կերպով այնպիսի հեղինակութիւն մի կ'առ-



297. — Միքայէլ փաշա Փոքրուզալ

նուր , այնպէս կը գիւթէր ունկնդիրը , որ կար-
ծես ուսուցիչ մ'էր որ կը վարդապետէր և զու-
ստիպուած էիր աշակերտի գեր խաղալ : Մազրե-
նի լեզուին պէս քաջ կը հասկնար , կը խօսէր
և կը զրէր ասճկերէն , անդիկերէն և գաղղիե-
րէն . լեզուն ալ մաքին նման ճկուն և բեղմ-
նաւոր էր : Իրեն սիրած մասնագիտութիւնք էին
անանաւական և ելեւմտական գիտութիւնք , որ
ուրց մասին ճառող հեղինակ և զիրք չկայր՝ որ
իրեն ճառող չինէր : Արդէն սարիներէ ի վեր
ուսուցչութիւն կ'ընէր Երաւագիտութեան և
Քաղ . Տիեզեագիտութեան . կայսերական Միլիյէկ
վարժարաննին մէջ , որով կը լուսաւ

ձեռնաս պաշտօնեաներ հասցունել տէրութեան : Այդ մասնագիտութեան մէջ էր իւր զիսաւոր գաղտնիքն , որով տրժանացաւ այնպիսի համականութեան վայել և փափուկ պաշտօններ վարել՝ այնքան փոթորկալից ժամանակներու մէջ : Սակայն լոկ դոցա մէջ չէր ամփոփուած իւր հմտութիւնն , հաւասարապէս իմաստափրութեան և պատմութեան , օստար ազգաց զրականութեան , և բարձրաստիճան անձին վայել և կարեւոր ամենայն ուսմանց և գիտութեանց տեղեակ էր նա : Սուր , կարուկ , իմտատալից տեսութիւններ կ'ընէր ամէն կարդացածին և լսածին վերայ , այնպէս որ ինչ զիտութեան մասին որ խօսէր՝ նոյնին մասնագէտ պիտի կարծուէր : Իւր առնը զիսաւոր զորդըն էր ճոխ գրատունն , զոր և պարծանքով կը ցուցնէր բոլոր այցելուաց , ուր՝ առանձին առանձին գարաններուն մէջ՝ կորդով և ճաշակով զիտեցուած էին հազարի չափ այշեւալ նիւթոց վերայ ճառող հաստիներ , զորս մի առ մի — անհաւատալի բան — թերթեր՝ ընթերցեր և ուսումնասիրեր էր , որուն անժիսանի ապացոց էն այն ամէն զիտութիւնը , որ կը զանուին նշանակուած նոցա շատերու լուսանդրին վերայ : Սակայն նորա զիսաւոր ուշը գրաւեր էր մայրնի լեզուին և զրականութեան ուսումն , որ և մինչեւ իւր կենաց վերջին ժամանակը՝ իրեն միակ սիրելի պարապումն և զրօնանքն էր եղած ազատ ժամուց մէջ : Այդ անխոնջ և բաղմանայ ուսումնասիրութեան արդիւնք է՝ իւր միակ անգին գրուածքն Եղիչէի մասին , զոր ժառանգութիւն թուզոց ազգիս բանասիրաց , և որուն նշանակներ տեսեր են և պիտի տեսնեն նաև

ներկայ թերթիս մէջ մեր ընթերցողներն : Առ ինսամով եղած ուսումնասիրութիւն մ'է մեր ամենէն աւելի սիրելի պատմիչն վարուց և զրութին , յորում ցոյց կուտայ հեղինակն իրեն բովանդակ հմտութիւնը , և կը ներկայանայ մեզ միանգամայն լեզուարան , պատմագէտ , բանասէր , կրօնագէտ և քաղաքագէտ : Այդ մեծ աշխատութեան համար կարեւոր եղած ամենայն միջոցները ձեռք բերեր էր նա , ինչպէս կը վկայեն նոյն գրութեան ծանօթացող անձինք , զիրք , սուսարան , աշխարհացոյց , պարսիկ և հնդիկ կրօնից վերայ ճառող մասանք : Յուսամք թէ այդ գրութեան մէջ լուծած պէտք է լինի շատ խնդիրներ որոնք մերթ ընդ մերթ ծագեր են և վերջերս այլ ծագեցն բանասիրաց մէջ . հետեւարար շատ մեծ օգուած և ծառայութիւն պիտի մատուցանէ մեր ազգային գրականական պատմութեան : և բանասէրք հետաքրքրութեամբ կը սպասնեն նորա հրատարակութեան : Միքամէլ փաշա , նմուշ լինելով նաև պարակիրէն լեզուի և պարսից Դ-Ե գարու կրօնական և քաղաքական պատմութեան : — որոնք անձուկ ազերս ունին իրեն ուսումնասիրած գործոյն հետ , — ի հարկէ մեր մէջ ամենէն աւելի ձևանաս անձն էր այդ աշխատութեան :

Սոյն Եղիչէի քննադրատական ուսումնասիրութիւնը հրատարակուած է Վենետիկի Միխեան տպարանէն 1905ին :


ԱՂԲԻՒՐՆԵՐ . — Քաղմավեպ 1898 Ա. Պետրի . — Յիշասակ Միխայէլ Փորուզալ փատայի 1898 . — Բիւզանդիոն 1897 . — Մասիս 1897 . — Մարկոս Աղաբեկիսան . — Օստր բերքեր են .

ԱՐԹԻՆ ՊԵՅ ԶՐԱԳԵԱՆ

1800-1859

Սուրբիս Զրաքեան՝ որ Եղիպատոսի փոխարքայ Մուհամմէս Ալի փաշայի որդւոյն Թօսուն փաշայի վաճառականական գործերու մասակարարն էր , 1812ին երբ իշխանը մեռաւ , Պօլէն Եղիպատոս փոխազրուեցաւ . 1814ին՝ ալ իր բնաւանիքը Պահիրէ իր քով կանչեց : Սուրբիս

զաւակը Արթին պէտ ծնած էր 1800 ին Պոլիս , հազիւ 12 արքեկան էր և արդէն նմուշ էր հայերէն , թուրքերէն և իսակերէն լեզուներու : ուսած րլաւով Պօլիս գարոցի մը մէջ : Արթին պէտ օգնական եղաւ իր հօր սեղանաւորական և վաճառականական գործերուն , զոր կը կատարէր



298. — Արքին պէյ Զրբանեան, ուսանող Փարիզի մէջ 1826ին

ի հաշիւ Թօսոււն փաշայի պաշտօնարանին :

1818ին Մուհամմէտ Ալի վարժարան մը բաշաւ յատկապէս Սապաս իշխանին կրթութեան համար սահմանուած, ուր ուրիշ քանի մը տպաքներ ևս դրաւ իր իր թուան դասընկեր, Արթին պէյ և իր եղբայրը Խոսրով պէյ այդ աշակերտաներուն մէջ կը գանուէին : Մուհամմէտ Ալի երբ առաջին անգամ վարժարան այցելեց Արթին պէյի ջանասիրութեան և արեւելիան դրականութեան մէջ ըրած յառաջդիմութեանը համար րիւրայի խամփակ (զօրապետութեան) աստիճանը չնորհեց : 1825ին Սապաս իշխան թուուց վարժարանը, այն ատէն Արթին պէյ և իր եղբայր ևս իրենց ընկերներուն հետ փոխագրուեցան Քաոր-էլ-Ալի կոչուած վարժարանուր :

1826 Ապրիլ Յին երկու եղբայր ալ միւսներուն հետ Ֆրանսա զրկուեցան փաշային հրամանու և առաջնորդութեամբ Պ. Յումարդի : Ֆրանսա պայի մէջ Արթին պէյ քաղաքական և եկեւմուց անական, վաճառականական

և համաղգային օրէնքները ուսաւ՝ Պ. Պ. Յումարդի և Մակարէլ ուսուցիչներու խնամքին սակլ :

Արթին պէյ 1834 Սեպտեմբեր 14ին Եգիպտոս վերադարձու ուսման ընդարձակ պաշտով մը, իր հայրը մեսած էր և մայրը ու քոյրը Մէհմէտ Ալիի սահմանած թոշակով կ'ապրէին :

Փաշան պատերազմի պաշտօնատան մէջ դրաւ զինք սազ գոլ աղջափի (զօրապետի օգնական) աստիճանով և իր եղբայրն ալ՝ Խոսրով պէլ, իր քով առաւ :

Նոյն ժամանակ Արթին պէյ սկսաւ ֆրանսերէն պատերազմական արուեստի գրքերը թուրքերէնի թարգմանել, այդ ասենսները թուրքերէնը Եգիպտական կառավարութեան պաշտօնական լեզուն էր և սովորաբար բանակին սպոնսուուն մէջ կը գործածուէր :

1835ին Արթին պէյի յանձնուեցաւ անտեսութեան և թարգմանութեան վարժարանին տեսչութիւնը, զոր Մէհմէտ Ալի փաշա Գանիրէի միջնաբերդին մէջ հասաստած էր :

Արթին պէջի յանձնուեցաւ նաև կազմակերպութիւնը ճարտարապետաց վարժարանին, որ յետոյ փոխադրուեցաւ Պուլաք և կոչուեցաւ բազմարուեսից դպրոց :

Վեց ամիս ետք փաշան գոլոցին աեսուչ անուունեց Եռուսուֆ Հրթէքեան պէջը սրով Արթին պէջ նորէն պատերազմական պաշտօնարանին մէջ մտաւ և միջնաբերդի վարժարանին տեսչութիւնը նորէն ձեռք առաւ՝ հազարապետի աստիճանով և անուանուեցաւ նաեւ անդամ պետութեան մեծ ժողովոյն :

Այդ ժողովոյն մէջ նշանաւոր եղաւ բարձաթիւ երիտասարդ ընկերակցաց հետ, իր հակառակորդ Ենիշէքեաց և Մամլուքաց հին ոգով ցուած յետադիմական ասրիերու :

Արթին պէջ այն քան մեծ հմտութիւն ցոյց կուտար այդ ժողովին մէջ որ փաշան՝ Արթին պէջի կարծիքը նախ իմանալ կուզէր որտչում մը տալու համար, Արթին պէջ սրակչու զի յիշեալ հակառակ կուսակցութեան արգելքներուն յաղթէ և իր տիրոջ շահուն ու պատույն ծառայէ թուրքերէնի կրթարքանէր ամբողջ զրքեր որոնք ժողովոյ վերաբերեալ վարչական ինդիքներու վրայ կր ճառէին :

Թարգմանելէ զինի կր կարգար մեծանուն փաշային, որ բմբանելով անոնց կարեւորութիւնը կր հաւանէր յատաջդիմական որոշումներու և այս իսկ պատճառաւ Մուհամմէտ Ալի փաշա Եգիպտոսի տնահեական կազմակերպութեան շատ օգտակար եղած է :

1836ին ժողովին գործերը շահուալով Արթին պէջ առաջարկեց որ մեծ ժողովին զատ կազմուի նաև յանձնաժողով մ'ալ, ինչ որ լուգունուեցաւ և պատերազմական նախարար Մուխթար պէջի վարչութեան ներքեւ կազմուեցաւ :

Երբ 1839ին Կարապետ պէջ նուպար, որ Մուհամմէտ Ալի թարգման քարտուղարն էր մնուաւ, Արթին պէջ յաջորդեց նոյն պաշտօնին միրայի (գնդապետ) աստիճանով, իսկ եղբայրը Խոսրով պէջ ալ երկորդ քարտուղար եղաւ :

Արթին պէջ մեծ յաջողութիւն ցոյց տուաւ նաեւ սոյն պաշտօնին մէջ :

Բոլոր թղթակցութիւնները արտաքին թէ ներքին ինք կատարէր, ըլլար Պօլոսյ, ըլլար Եւրոպական աէքրութեանց հետ, նոյն ժամանակէն սկսաւ արաբերէն լեզուն զործածուիլ տնտեսական և եղեւմտական յարաբերութիւննց մէջ :

Ասորւոց պատերազմին ժամանակ (1839—41) քաղաքական ամէն դիպուածներու հոգին դարձած էր :

1841ին Արթին պէջ Մէհմէտ Ալիի կողմէ պատգամաւոր գնաց Փարիզ և Լանսան, և ծանօթացաւ պետական նշանաւոր մարդոց հետ, սրոնց հետ բարեկամական յարաբերութիւններն պահեց մինչեւ իր մահը :

Նոյն պատգամաւորութեան միջոցին Մէհմէտ Ալիի հետ իր ունեցած թղթակցութիւնները կը վկայէն թէ երեւելի պետական մարդուկ ինչպէս կը յարգէն և համարումն ունէին Եղիպատի վերանագոգչին վրայ, և Ֆրանսացի ուսիւղ երիտասարդու մանաւանդ Հայոց պիք կարեւոր գեր մը կունենացին Եղիպատի յառաջդիմութեան մէջ, արգէն Բ. Դրան հետ եղած հաշտութեան պարմանաց մէջ Մէհմէտ Ալի մեծ խարացիութիւն ցոյց տուեր եր Պօլոս պէջը արտաքին զործոց պաշտօնեաց անուաննելով և սրում մահէն ետք սոյդ պաշտօնը յանձնուեցաւ Արթին պէջին պէջի :

Արթին պէջի թղթակցութիւնք օգտակար եղաւ Մէհմէտ Ալի փաշայի որ աեղեկացու թէ Երուսաղիմ պետութիւնք ինչ կը մտածեն իրեն նկատամբ՝ Եղիպատուի պատական այդ վտանգաւորութիւնին :

Նոյն միջոցներուն եր որ բարեկամացաւ մեծանուն Բէշիտ բաշայի հետ՝ որ քրանսացի կուբի Ֆիլիպ թագաւորի ատեն Բարիզի գեւապան եր Սուլթան Մէհմիտ կողմէ և յետոյ մեծ եպարքս եղաւ: Սյա բարեկամութիւնը հետոհետէ աւելնալով Արթին պէջ կրցաւ իր միջնորդութեամբ հաշտեցնել իր տէրը Մէհմէտ Ալի՝ Սուլթան Սպահան Մէհմիտ հետ և դիւրացուց անոր որդեւոյն Սալիհ փաշայի ուղեւորութիւնը ի Պօլս և յետոյ 1845ին ալ Մէհմէտ Ալի փաշայի ուղեւորութիւնը դէպի Պօլս:

1844 Յունուար ամսուն մէջ Արթին պէջ Քէրիքի աստիճանաւ արտաքին զործոց և վաճառականութեան նախարար անուանուեցաւ Պօլոս պէջ Եղիպատի վախճանութեան ուղարկութիւնը ի Պօլս և յետոյ 1845ին ալ Մէհմէտ Ալի փաշայի ուղեւորութիւնը դէպի Պօլս:

Սյա բարձր պաշտօնին մէջ Արթին պէջ քաղաքական փափուկ պարագայներու մէջ կրցաւ վերցնել վաճառականութեան մենավաճառը և աւելի աղատ զրութեան մէջ զրաւ երկիրը, այդպէսով վերցաւ մենավաճառը որ անցելոյն մէջ թէեւ օգտակար եղած էր, սակայն նոյն ժամանակուան համար վասնգաւոր կ'ըլլար և արգելք վաճառականութեան ու վնաս կը պատճառէր Եղիպատուի կառավարութեան:

Այս փորձերու արդիւնքը եղաւ հետզհետէ աճող զարգացումը ներածուած ու արտածուած ապրանաց որոնք քաջալերեցին Մէհմէտ Սլի փաշան չարունակելու միջա վաճառականական ազակ քաղաքականութիւնը :

Խորով պէջ ալ շատ նպաստաւորուեցաւ իր եղորմէն, նախ քարտուղար—թարգման և յետոյ փոխարքային պաշտօնաբանին պետ եղաւ :

Այս կարեւոր բարենրորդութիւններուն պատճառաւ Սրթին պէջ Եղիպատոսի և Եւրոպացի բոլոր վաճառականական ընկերութեանց և անձերու համակրութիւնը գրաւեց և իր մեծ արժանիքը գնահատուեցաւ : Իր ըրած լուրջ բարենրորդմանց շարքին մէջ կրնանք աւելցնել նաեւ ինչ որ ըրաւ ելեւմայց հաշուակալութեան մէջ զոր ուրիշ մասնական պաշտօններու հաշուակալութեանց հետ կազեց՝ յարմարցուց . ինչպէս են մաքսատանց, անցագիրներու, հետազրաց, թզեասարութեանց, վաճառականական տականներու և Եւրոպացի մէջ եղած Եղիպատոսի ուսանողաց գալրոցական ծախուց մասնակարութութիւնք :

Անգղիական բնկերութիւն մը գաշնագրութեան մը զօրութեամբ 1825էն ի վեր կը կատարէր Մահմուտիէ ջրանցքէն դէպէ Հընդկասահան շոգենաւային սպասարկութիւնը : 1845ին Փեննասուլար շոգենաւային ընկերութիւնը հատամուտ եղաւ այդ փոխագրիչ ընկերութիւնը հեղող անցնելու որուն փոխարքային հետ ունեցած պայմանաժամը տւարանելու մօա էր :

Սրթին պէջ գուշակելով այն անպատճենութիւնները որք կրնային ապագային յառաջ գալ այս փոխանակութեամբ, յորդորեց իր տէրը որ ես առնէ տրուած արածոնութիւնը և պետութիւնը ինք ընէ այդ ծառայութիւնը և իրաւ ալ 1846ին սկիզբները բնիկ աեղացիներէ յաջողեցաւ կազմել փոխադրութեան ընկերութիւնը որ մեծ հոչակ ունեցաւ իր մատաւցած գիւրութեամբ :

1848ին Մէհմէտ Սլի փաշա հիւանդանալով բժշկաց խորհրդով ճամբրոցութիւն մը ըրաւ Եւրոպա, իրեն ուղեկցեցաւ նաեւ Սրթին պէջ, սակայն քիչ վերջ, Մէհմէտ Սլի իր իմացականութիւնը բարորովին կորանցուցած ըլլալուն Եղիպատուածներու վրայ :

Մինչեւ Մէհմէտ Սլի մահը Սրթին պէջ շատ անգամ անոր քով կ'երթար որ կը ճանչէր միայն զինքը և որու հետ կը տեսնուէր զանազան դիմուածներու վրայ :

Իսլամիմ փաշայի եռամսնայ իշխանութեան

միջոցին Սրթին պէջ պահեց իր նախակին պաշտօն ու զիրքը :

Իսլամիմ փաշայի մահուանէն վերջ Ապագաս փաշա Եղիպատոսի փոխարքայ ըլլալով Սրթին պէջ մնաց իր պաշտօնին մէջ և ապա շատ անշամ գեսպանութեան գնաց Պօլիս և իր վերջին գեսպանութեան միջոցին Սուլթանէն ստացաւ քաղաքական ամէնէն բարձր աստիճանու՝ որ կրնար արուիլ քրիստոնեայ հպատակի մը, այն է բիւրպէի պալա (1849) :



299.— Սրթին սէլ Զրաբեան 1853ին

Երբ 1850ին Սուլթան փաշան փոխարքայ էր, Սրթին պէջ սափառուեցաւ թագուլ իր պաշտօնն ու Եղիպատոսը և ապաստանիլ Պօլիս ուրիշ բարձրաստիճան անձնաւորութեանց և փոխարքայական գերգասասնի իշխաններու հետ :

Սրթին պէջ չորս ասրի հօն և երկու ապրւոյ չափ Փոլիդ մնալէն եաք երբ Սալիմ փաշա փոխարքայական գոնը բարձրացաւ, Եղիպատոս կանչուեցաւ և իրեն առաջարկուեցաւ նորէն արտաքին զործոց և վաճառականական նախարարի պաշտօնները, բայց ինք նկատելով որ ազատ ու անկաշկանդ չպիտի կարենայ աշխատիլ, ընդու-

Նեց և անպաշտօն նախարար ու փոխարքային
մտերիմ խորհրդականն եղաւ : (1854)

Սայիտ փաշայի իշխանութեան առաջին տարիները մինչեւ 1857 թուական, Արթին պէջ իր բոլոր զօրութեամբ ընդգիւմացու Պ. Լէսէրսի ծրագրին՝ Սուէզի պարանոցին բացման արտօնութիւնը ընդունուելուն:

Իրեն համակարծիք էր փոխարքային եղությունը Մուսթաֆա Ֆալլը փաշա, բայց հակառակ անհնաց ջանքին Պ. Լէսէրս դատը վատելեցաւ փոխարքային առջեւ, չնորհիւ Նաբոլէսն Գ. կայսեր և Մոռնի պաշտօնէին օգնութեան եզրաւոր պաշտօնութեան, ասոր վրայ փոխարքային հրամանաւ, իշխան Մուսթաֆա փաշա և Արթին պէտք ստիպուեցան թողուլ Եղիպատուր անսակ մը աքսոր, որով Արթին պէտք Փարփառ մէկնեցաւ 1857ին :

Քանի մը ամիս վերջ երկու քն ալ Եղիպտոս
կանչուեցան . Առևզի պրատենալին պեզում մը ար-
դեն կատարուած զործ մ'էր , և ընկերութիւն
մը կողման ելու վրայ էր ընդգէմ Յ . Դրան
մնանին և առանց անոր հաւանաւ թեան :

Արթին պէտք՝ ջրանցքի բացման հափշիմու-
թիւնը բարձրագոյն շահերու մտածութէն յառաջ
կուզար. որով միանդամայն կը յայնուի իր քա-
ղաքագէսա միտքքը, միայն ինքը չէր այս շնոր-
դիմութիւնը ընող, ուղև և Յամ, պիտութեան
բարեկամ ուրիշ քաղաքագէսաներ եւս, Երբ Լը-
սէֆո Լոնտրա գնաց Սուէզի ջրանցքի բացման
խորհրդագոյն և լլացած ծրագիրը յայննեւու համար
Լորա Պալմերադոնի և Անգլիական Ազգին, իր
առաջարկու շատ ցրառութեամբ կ'ընդունաւի : Ե.
Պալմերադոն յայնապէս կը զեկուցանէ որ Անգ-
ղիու կառավարութիւնը բալորովին հակառակ էր
այդ խորհուրդին, որովհետեւ այդ ջրանցքը
բաժնելով զեղիսառու Օսմանիան պետութեան
ամբողջութենէն, միշտ վասնով մ'էր իրական
բաժնեման, որուն ինքիննքը մեծապէս հակա-
ռակ կը ցուցնէր այն տաեն Անգլիա : Թէ
Լորա Պալմերադոնի և Սրբին պէտի այս
վախը որչափ բանաւոր էր, Ժամանակի
ցոյց կուտայ արդէն : Բայց ասափ Արթին պէտ-
քիտէր որ այդ ջրանցքին ծախուց բաւական
չէր միայն Եգիպտասու և Օսմանիան պիտութիւնը
հասեւալիք պէտք պիտի ըլլար օտարաց գիմել

և այն ատեն պահանջատէրք կարող չէին միշտ
անվերջանալի պահանջներ ունենալ :

Իր ընդգիւմութիւնը վաճառականական մասին չէր . այլ ուրիշ քաղաքական բարձրագոյն ահասակետներուն համար :

Արթին պէտք 1840ին ամուսնացած էր իր հօ-
րեղբօր աղջական Զբագեան Կառարինէի հետ և
ունեցած երկու օրդի՝ Եաղուապ Սրթին փաշա-
նախարդ կրթական նախարար Եղիզարոսի և Եռու-
սումբ Սրթին պէտք :

Ետպուս փաշա իր միհանուն հօր ամէն գեղեցիկ ձիբքերը ժառանդած Հայ և Հայ-Կաթողիկ հասարակութեանց մէջ փայլուն զիբք մը ունի այսօր և միանդամայն Հայկական Բարեգործական Միութեան զիբ նոխագահն է և որուն կենսագրաւիմբ պիտի տանիք :

Արթին պէջ ինչպէս լոինք թուրքերէն լեզ-
ուալ շատ երկասիրութիւններ ուներ ելեւմտա-
կան և առեւտրական նիւթերու վրայ գրուած
և ֆրանսերէնէ թարգմանութիւններ, որոնք
անտեսական և զինուորական նիւթոց վրայ ՎՐ-
ուած էին, ասսնք բոլորն ալ ապօւած են Պու-
լագ՝ Պոհիւրէի մէջ առանց նովինակի և թարգ-
մանցի անուններու:

Ֆիրանսակերէն զբան է տեղեկագիրներ և ծանօթութիւններ Փարփազու Ասիտական ընկերութեան և ուրիշ ֆիրանսակերէն համագէպներու համար :

Սրբին պեց քաղի քաղաքական Պալայի և
զինուորական գերիգի ասամաններէն ունէր
նաև շքանշաններ, ադամանդակուռ Եթեանը
իմբրիխար, Ֆրանսայի Պատոյ Ա. Կէռնի հրա-
մանատար էր . Եկապոլսոյ Ս. Ֆրանչակոսի Մեծ
Ժապուէն, Փարթուկալի Քրիստոսի կարգին Մեծ
Ժապուէն, Հռովմայ Մեծին Գրիգորի Հրա-
մանատար, Գերմանիոյ Կարմիր Արծոյն և Մու-
սիոյ՝ ադամանդակուռ Ս. Աննայի Հրամանա-
տար են . են .

Վայրենմանած է 1859 Փետրուարի ամսոյն 59
տուրեկան հասալին մէջ Գահիքէ : ուր թագ-
ուած է Կաթողիկ Հոյոց գերեզմանատան մէջ
ի Հին Գահիքէ :

Ա.Գ.ԲԻՒԹՆԵՐ. — Արքին պել գրեց Եազուա
Արքին փառա . — Բազմավեպ 1896 Վենետիկ . —
Մասեաց Աղաւենի, Մասիս, Արշալոյ Արարա-
ևան 1859 եւն. եւն.

ՄԱՏՔԵՐՈՒ ԱՅՎԱՏԵԱՆ

1830-1876

Մատթէոս Այվատեան ծնած է Կեսարիոյ Մուհամբաւուն գիւղը 1830ին՝ 16 ապրիլիսին Պոլիս եկած է ուր երկար ատեն մասնաւոր զառներ առած է Խրիմեան Մկրտիչ վարժապետէն (ապա Եպս. և Կաթողիկոս) իր հօրեղոր Յովհաննէս Այվատեանին (Սրբաճի Պաշիի) առանց և 1851ի ատեններն ալ յաճախած է Սահակիան վարժապանը :

Աշխատակցած է Սահակիան վարժապանի սաներու հրատարակած Բուքասան հանդէսին : Դպրոցէն ենելէն վերջ առեւորական հրազարակութիւն է և ապարանի մը մէջ ձաւայած է :

1851-58 և աւելի ետքը երկոր ատեններ աշխատակցած է Խեթիւնների Մասիսին գրելով թուակական քրօնիկներ :

Ազգ. Սահմանագրութեան հաստատման առեն 1860ին գործոն գեր մը ունեցած է :


Ատեն մը ռւաստցութիւն ըրած է և 1863ին երբ Զարգարեան թղթավաճառատունի բոցուած է հան իր անօրէն պաշտանավարած է մինչև 1867 թուականը, որ ատեն հրաժարելով Ս. Փրկչի հրանդանոցի ապարանին անօրէն անուանուած է :

1860էն մինչեւ իր մահը զրեթէ միշտ կհառարից թեմէն երեսիխան եղած է և իր ձախուկովմեան կարեւոր գեր մը ունեցած է ազգային գործոց մէջ :

1869ին Սահզումէի էֆեար թերթին օգնական խմբագիրն էր, նոյն ատրին Սահզումէ բարձրագոյն բամբանաւ գաղաքարման դատապարտուեցաւ չնչին պատճառի մը համար, անմիջապէս ինք արտօնութիւն սասցաւ Արարատ անուն թերթի մը (տես թիւ 302) որ հրատարակուեցաւ մինչեւ իր մահը երբեմն իր ուղղակի վարչութեամբ և երբեմն ալ ուրիներու վարչութեամբ, եթէ Բ. Դուռը գայն դադրեցուցած չվար, այս թերթը ընդհանրապէս կը առցուէր Գ. Զարգարեան ապարանին մէջ :

Այվատեան իր կուռ խմբագրականներով և կարուկ տրամադրանութեամբ իր լու հրազարակագիր ճանչցուած էր առգին մէջ : Իր թերթը քանից խափանուած էր իր ընդդիմութեան

և սուր քննադատութիւններուն համար, անգամ մը Օգոստին Խօնասարեանի նոր Դարթեթիւն գաղուցուած էր «Այսոր Հայ ազգին կայ ըլլալը հրաշը է» դրամ բլաւուն համար, Այվատեան Բ. Դրամն այս արտաքի քննադատելով լրագրական ազատութիւն քարոզեց կծու խմբագրականով մը սուր մէջ բառ «Եթէ մոլովուրզը հօս մըն է, թերթերն ալ այդ հօմին պահապան չուներն են



300. — Մատթէոս Այվատեան

կ'ըսեն, վերցուր պահապան չուներն՝ այդ հօսպ գայլերուն յափշտակութեան մասնեցիր» : ահա այդ ասթիւ Արարատ նորէն կը գաղրեցուի :

Աւրիշ անգամ մը երբ Եւրոպական լրագիր մը ուշացրութիւն կը հրաւիրէր Հայոց վերջին թագաւոր Լիւռն Զ. Փ. սերունդէն Եւրոպա զրտնուած քանի մը անձանց նիւթական խեզճ վիճակին վրաց Այվատեան իր թերթին մէջ հետեւեալը կը գրէր «Եթէ ամէն էսնոտի իր անկենը խնամելու պարտական է թագաւորաց կննան ալ թող իր անկեալները խնամէ», ու առան նորէն կը գաղրէր Արարատ :

1874-75 წ Այլամասն անդամ էր Գուշա-
ռական Հարստահարութեանց Յանձնաժողովոյն
որ ի վերջոյ Սզգ . Երեսփոխանական Փողովոյն
մասոց Նշանաւոր . «Տեղեկապիրը գու առական
հարստահարութեանց» :

1876ին Տրապիզոնի մաս Եանտ զիւղի մէջ Հայք քառանայց մը՝ Հիւսէկին անսւն հարփերապետի մը կողմէ անիրաւի ծառի մը կապուելով կը ծնծուի և վրան առ ջար! կը թափին, քառանան ձանրապէս կը հիւսանգանաց յակ Պօլսա-

Այլատեան մահամերձ վիճակի մէջ տուն կը
փսխագրութ ուր հիւանդ անկողին կը մտնէ,
միւս կողմէն հրաման կ'ըլլաց քննութիւն բա-
նալու . Արարած 1876 Մեպս . 21ին նորին
կ'ըսկսի հրամարակուիլ . Հոկտեմբեր 1875 կը
կանչուին ցիշեալ երեք խմբագիրներն . Մելիք-
եան Մկրտիչ և Մարգարեան Յօվհաննէս, ան-
ձամբ կը ներկայացնան Բ. Դուռ ուրիշ իրենց
կը յանձնաբարսի միւս չորսքշաբթի Տասպիզոն
մելինենին իսկ Այլատեան, հիւանդ ըլլալով ը

April 20th 1873
Watkins W. D. Johnson

J. P. Gray. Design 5. The single and short sharp blow can be best
produced by the hand weapon itself. Upon this the other two or three shall be
used as auxiliary weapons. Design 6. The long and sharp sword.
This is the best. It is the most rapid and effective weapon. Design 7. The
short sword. This is the best. It is the most rapid and effective weapon.
Design 8. The long and sharp sword. This is the best. It is the most rapid and
effective weapon. Design 9. The long and sharp sword. This is the best.
Design 10. The long and sharp sword. This is the best.

W. H. Dyer

301.—Մասքենու հյատեանի ձեռագիրը

կան մամուլը՝ Մեմորա, Արտարա և Հայրենի
արձագանք կ'ըլլան այդ գէպքին և կը զրեն այդ
մասին դատապարտելով՝ Տրապիզոնի հառավաշ-
րութիւնը, անա Արտարա բարձրագոյն հրամա-
նաւ գարենալ կը դաղրի և նոյն ժամանակի Ե-
պարքսո Մէջնէտ Բիւշտի փաշա կանչել կուտած
Այգատեանը և Բիւնապահներան կը հրամայ-
զմնաք ցման ծեծել քանի որ այդ անսակ գէպք
չէր պատճառ և Սյալատեան զբարտութիւն
բրած էր:

կարենալ գալուն անոր ալ բժիշկ մը կը զրկուի :
Յաջորդ չորեքտարիթի 26 Հոկտեմբեր Մելիքեան
և Մարգարեան Օսմանիան շագենաւով կը մնկ-
նին Տրապիզոն :

Տրապեզոնի մէջ քննութիւններն կը հաստատեն Շանսա գիւղի իրազութիւնը և ազատ կ'արձակութիւն յիշեալ խմբագիրներն ըստ Սյյատեան կերած ծեծին ազգեցութենէն արիւն կը թքնէ . և թէեւ կը աենէ Օսմանեան Սամանագրութեան հաստատումը . բայց չը կարևորագու ազատիլ . իր հիւանդագին վիճակին 1876 Դեկտեմբեր 15-ին Պօլուն Բերայ անցած միջոցին Գուլէ Գաբուլի . մասն վրայ յանկարծաման՝ կ'ըլլայ : Յուղարկաւորութիւնը

խիստ փառաւոր կ'ըլլայ և ժողովրդին ստիպման տակ կը թաղուի Դալաթիոյ Ս. Փրկչի եկեղեցւոյ բակը ուր չնո՞ք գիտեր ինչ դիտումով հիմայ բոլորովին անյօյտացած է իր հողակոյտը : պէտք է ու անհրաժեշտ որ շիրիմ մը կանգնուի անմահացնելու համար իր ցիշանակը :

Նոյն ատեն հրատարակուող Փունջ օրաթերթէն կը քաղենք հնաեւեալը .

«Սառնաշունչ և ուժդին հոգմունք կը փչէին , յորդառատ անձրեւ հեղեղօրէն կը տեղար չորիքչարթի օրը . բայց դարձեալ անհամար բազմութիւն ազգայնոց՝ դէպի Դալաթիոյ եկեղեցին գունդագունդ կը դիմէր՝ վերջին յարդանք մը տալ սառուցեալ մարմնոյ մը , որ՝ Արարա լրագրի արածնատէր և խմբագրապես Այլատեան Մասթէս էֆէնտիինն էր , որ Տրապիզոնի վերջին ծանուցեալ անցից պատճառաւ անկողին իյնալէն յետոյ՝ վերջապէս չկրնալով դարձան գանել՝ փակած էր իւր աչերը :

Լացին և կուրան ամենքը , եկեղեցական և աշխարհական ամէն կարգէ անձինք : Գեր . Տ . Մատթէս եպիսկոպուս Իզմիրլեան՝ նոյն աւուր առաւոտուն Դալաթիոյ եկեղեցւոյն մէջ յատկապէս Ս . Պատարագ մատոյ . Ս . Պատիտրք Հայրը , և այլ ամէն կարգէ ու սասինանէ եկեղեցական Հարք ներկայ էին ինքնարերաբար . ամենաախուր դամբանականներ արտասանեցին Ս . Պատրիարք Հայրը , Գեր . Տ . Խորէն Սրբազն , Զերազ Պատարք էֆէնտի և այլք . սրտասուօք արտասանեցին և արտասուօք լսեցին յուզարկաւորք : Այլատեան էֆէնտի մարմինը պարունակող սգասաւեր դադալն սարօրինակ շքեղ թափորով Դալաթիոյ հրապարակներէն շըրջագայցունելէն յետոյ , ամփոփուեցաւ . Դալաթիոյ եկեղեցւոյ բակը և գերեզմանը նոյն ինքն ժողովուրգը պեղեց ու փորեց գրեթէ մէկ ակնթարթի մէջ :

Անմիջապէս մասնաժողով մը կարգեցաւ , իւր կարօտ լծակցին և չորս որդւոց նպաստելու համար :

Շիրիմ մը պիտի կանգնուի վրան , դարձեալ հանգանակութեամբ :

Պատմութեան թողլով՝ Այլատեան Մատթէսուի վրայ արժանն ու կարւորն արձանագրել , կ'անցնինք մենք յոդ ուց հանութեամբ , և զուելով թէ անմահ պիտի միայ Այլատեան Մատթէսուի անունն ու ցիշատակը :

Ահաւասիկ , Զերազ էֆէնտիի խօսած ատենութիւնը :

Պարոններ

Ի պատիւ այն անձին՝ որ իւր կենաց առարէցը նախանձելի փառքով մը կնքեց , մեր ախուր պարատութիւնը կառարելէ յառաջ : Կանգ առնունք պահ մը ու քիչ մը խորհինք : վասնի ոյս գժգութիւնը մահուան՝ որ ամենուս գիմաց վրայ կանդրագառնայ , կը վատահացնէ զմեղ թէ Այլատեան ցաւեր ունի , և այս գոյ աչքերը ճարտասանն չրթունքներէ տւելի պերճախօսութեամբ կը վկայէն թէ կառկներ ունի նա :

Եւ արգարեւ ամէն անգամ որ անշնչացեալ գիտիկ մը շուրջը գտնուեինք , նորա կենաց ընթացքը ամբողջապէս կը պատկերանայ մեր տչաց առջեւ , և յայնժամ գիւրին կ'ըլլայ գուշակել թէ ինչ ակնկալութիւններ ունի նա , զորս երբեմն ամրող ազգի մը կիյայ պսակել :

Քննենք ուրեմն և Այլատեանը , մեր սիրելի բարեկամը , որ այդ ականաւոր անձերու կարգէն է :

Եւ ի՞նչ էր սա իւր բոլոր կենաց շրջանին մէջ : — Դասախրակակ , խմբագիր , երեափոխան : — Այս երեք բառերը բաւական են ցուցընելու համար թէ Սա իւր կեանքը ազգին նուլիած էր : Ասոր վրայ յաւելցնենք նաև բարուց ազնուութիւն մը , պատուառոր , աշխատասէր ու գործունեայ կեանք մը , պարտականութեան զգացումն ունեցող , համոզմանը մէջ տկարութիւն ցոյց չաւուզ , և ամէն ազգայն խնդրոց յուզման՝ ամէնէն աւած իւր կարծիքն յայսնող գրւուխ մը :

Զեմ ուղեր նորա սահմանադրական կեանքը նկարագրել և զանազան առթի մէջ ազգին մատուցած անձնուէր ծառայութիւնները թուել , վասնզի ձեր մէջ ո՞վ է այն որ չճանհնայ Այլատեանը և անոր կենաց պարագաները ինչ աղէկ չգիտանայ :

Ամէնքդ ալ կը ցիշէք արգէն՝ Ամամանաւ գրութեան վերաքննութեան միջոցին նորա կատարած արդիւնաւոր աշխատութիւնները , այս հանձարբն հետ՝ որ առկէ երկու շարաթ յառաջ շիշաւ և որ նահապետ թոււսիննեան կը կոչուէր :

Թոււսիննեան և Այլատեան հաւասարապէս յարգելի , արժանի ազգայն երախատագիտութեան , երկուքն ալ պատմութեան մէջ անցան փառաւոր էջեր գրաւելու :

Սակայն , Պարոններ , Այլատեան կտակներ ալ ունի :

Գիտէք դուք որ ձեր առջեւ տարածուած այս դիտակը զո՞ն մ'է և այս զո՞նը շատ տիտուր

յիշ սոսակներ կ'արթնցնէ մեր մտաց մէջ և ծան
պատասխանաւութիւններ կը դնէ մեր խղճին
վրայ . պարտաւորութիւններ՝ զար հմէ չի կա-
տարենք . անինինեալ ենք իւր յիշաւակին առջեւ-
ինչպէս եւ գժբախտ Հայոստանի այն հարաւա-

Բ . Դուռը . . և որոց պատճառաւ Այլքատեան
բաւական տաեն անկողնոյ ծառայեց և իրէկ
մեռաւ :

Սակայն այս հայրենասէր ու սահմանադրասէր անձը գլուխը իւր անկողնէն զուրս հանած



4873

ԳՐԱՔԱՂԱԿԱՆ ԱԶԳՈՒԹԵ ԲԱՀԱՅԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԽԵՏԱԿԱՆ

302.— *Batrachospermum*

հարեալ զոհերուն առջեւ, որոց դասը Այլվատ.
եան անյոզգողդ արիութեամբ, մինչեւ խակ անձ.
նազոհութեամբ պաշտպանեց :

Յաւալի իրողութիւններ կ'ակնաբերեմ, որք Օսմաննեան Սահմանադրութեան հրատարակութենէն քանի մը շաբաթ յառաջ տեղի ունեցան

Է անցեալ շաբաթ օր՝ լսելով թնդանօթներուն
աղմուկը որք օսմանեան Սահմանադրութեան
հրատարակութիւնը կ'ողջունէին . զօրաւոր ճիղ
մը թափած էր իւր տկար անդամոց վրայ , և
ուրախութենէն ինքպինքը առողջ գգալով՝ սաքի
ելած , սահմանադրական օրէնքները աչքէ ան-

յուղած էր և անոնց արաժադրութեանց յինլով .
բողոքազիր մը պատրաստած էր իւր հարսաս-
հարիչներուն դէմ :

Այդ գիրը կարդաց ինձ , երբ իւր մահուան
օրը դուզգերով , երերուն քայլերով
տունէն գուրս եղած ինձ պատահեցաւ , եւ երբ
նայն իրիկունը յանկարծ ինկաւ մեռու գեռ
տուն չ հասած . անցորդք չի ճանչցան անոր ո՛վ
ըլլալը և գրավանին մէջ զանուած այդ բողո-
քագիրը միայն իւր ո՛վ լինելը յայնանց :

Ահա՝ իւր կտակը , թէեւ չորս զոտակներ
ալ կտակած է ազգին , որոնք իրենց մատազե-
րամ հասակին մէջ պաշտպանութեան կը կարօ-
տին , որպէս զի զարգանան ու իրենց հօրը կեռն-
քը չարունակին :

Ահա՝ իւր նութեական կտակը զոր մեզ անկ
է գործագրել , Այլատեանի դասք՝ որ ազգային
դաս մ'է , մեր վրայ առնելով :

Աւասի կը փութում յայնել ձեզ իւր փա-
փաքները որք , անչուչա բալոր ազգին ալ փա-
փաքներն են , կասարելապէս վասա՞ որ ձեր
ամենուուգ զգսցումները կը ներկայացնեմ հայ երբ՝

Կը փափաքիմ որ իրեւ ճշմարտութեան հա-
հատուկ՝ եկեղեցւոյս մէջ թողուի Մատթէոս
Այլատեանի մարմինը :

Կը փափաքիմ որ ամենքս ալ մեծ Եպորքասին
արդարասէր զգացմանցը զիսելով՝ Այլատեանի
հարսասահարիչներուն պաշտօնանկութիւնը ու

պատիժը խնդրենք : Հայրենասէրն Միտհաթ , յօ-
ժարութեամբ անչուչա պիտի կասարէ մեր փա-
փաքը , իւր ոնկեղդ սահմանադրականութեան
կենդանի տպանցոյ մը տալով :

Կը փափաքիմ որ Այլատեանի որբերը ինաւ-
մելու համար կառավարութենէն տմաւկան թու-
շակ մը խնդրուի :

Եւ ի վերջայ , կը փափաքիմ որ հանգանա-
կութիւն մը բանալով արձան մը կանգնենք
յանուն Մատթէոսի Այլատեանի , ոչ իրեւ հայ-
րենասէրի կամ տաղանդաւոր ազգանոյ , այլ
իրեւ կոմմագաշատ կառավարութեան յետին
զո՞ին :

Թո՞ւ բոլոր սահմանադրասէր Օսմանցիք
— քանի որ այսպէս կոչուիլ սկսանք — առանց
ազգի ու կրօնի խարութեան փաւթան մասնակ-
ցիլ սոյն գործին և անմտանցնել Այլատեանի
յիշասակը՝ որ մշանչենաւոր բոլոր մը կը նշա-
նակէ քմանամ վարչութեան ու անողորմ հա-
րսանարութեանց դէմ :

Եւ հեղինակութիւններ . — Առաջնորդ քե-
րականութեան հայերն իւզուի . — 1863 Արա-
րատ լուսակը . — Ճառ ի պատիւ մամկոյ աշխա-
տաւորաց :

ԱՊԲԻՒԲԵՅ . — Մասիս 1876 . թիւ 1882 .
1894 . 1918 . 1919 . 1920 . Փունջ թիւ 23—24
(1876) . Մենաւա . Հայրենիք 1876 . — Եւ զու-
կիք Տ . Այլատ ի նիւր նօր եւ 6 .




ԳՐԻԳՈՐ ԵՂԻԱՅԻՆ (Gregoire d'Elie)

1883-1911

Մեծանուն բարերար Գրիգոր Եղիային ծնած
է 1833 Մայիս 25ին Պօլսոց մէջ , իր ծնողքը
Պարսկաստանէն գաղթած են և տեղւոյն երեւե-
լի ընտանիքներէն մէկուն կը պատկանին , իր
հայրը խունկի և խէժի վաճառականութեամբ
կ'զբաղէր և երբ անգամ մը ապրանք բնուցած
կը զիկէր , բէշիափ մէջ փոթորիկի կը բանուի և

իր ամբողջ հարսասութիւնը կը կորսուի . երու-
սաղէմ կ'երթայ և անկէց Պօլսու ուր կը ծնի իր
Գրիգոր զաւակը , անկէց կ'անցնիք Գահիքէ ուր
Տարպ էլ կէտէն զանուուղ հին դպրոցին մէջ
(հոգեստուն) կ'առնէ Գրիգոր նախնական կըր-
թութիւնը . իր գլանցական ընկերներն եղած
են Սառափ Միքայէլ (իլթիզամի մէջ) , Գարրիէլ

Օղլու , ձեզահիրճի պաշի Եղիս , Կարտապետ Գալուստ : Եղիսականի ուսուցիչը եղած է Պետրոս Թաթիքիստի Զմիւռնիացին որուն երախտա գէտ եղած է մինչեւ վերջ , նոյն իր ուղարցեալ դաստիարակին գերեզմանը այցելելու համար Զմիւռնիա գտցուծ է : Հոգետունէն ետք յաճախած է Համբլլընի Անդդիական վարժարանը ուր տարի մը միայն մնացած է , անկէ կ'անցնի Ռէֆու Պէփ Էcole des Langues լիւն , ուրիշ շրջանաւարտ ըլլալով կը դիմէ Արտաքին կործաց նախարարութեան պաշտօնի մը համար , այդ առեն Արթին պէյր պատրաստած էն թէ միրի



305. — Գրիգոր Եղիսականի Երիտասարդութեան պատկեր

ասպանքները ծախած և մսխած է , որու վրայ Արթին պէյր բանաստեղուած էր Ալէքսանտրիա և անկէ վախած էր Փարիզ , իսկ Արթին պէյր եղբայրը Խոսրով պէյր ալ Chef de Cabinet էր : Եղիսական Խոսրով պէյր կը դիմէ պաշտօն մը ձեռք անցունելու համար , այս վերջնուը շատ կ'աշխատի բայց իրեն կը պատասխանուի թէ — մենք հայերուն ծառերը արմատավիլ ընել կ'ուղենք գուռք կ'ուղեք որ ծիլորը խնամէք :

Այս ատեն պաշտօնատունները զատ զատ չեն այլ ամէնը մէկ կը գանուէին փոխարքային պալատան մէջ :

Խոսրով պէյր յուսահամա՝ Եղիսականի արտաքին

գործոց պաշտօնատան մէջ դործ մը դանելին : կը յանձնարարէ Ռուսական հիւպատուսարանին : Պ. Պակար հիւպատուսը սիրով կ'ընդունի և կ'անուանէ զինքը թարգման քիչ ետք , Խրիմի պատերազմին , քօնսօլուները կը դադրին և ինքն ալ անպաշտօն կը մնայ : 1878ին քանչէլէր կ'անուանուի Ռուսական հիւպատուսարանին , պաշտօն որ կը վարէ մինչէ 1880 , իսկ անկէ ետքը մինչև 1887 իր Վիշ Consul (փոխ հիւպատոս) Եղիպատոսի Պ. Լակովսքիի յաջորդելով : Իր այդ պաշտօնին մէջ կարդ մը կարեւոր գործառնութիւններ իր ձեռքով եղած են՝ նախկին հիւպատոս Տր. Ալ. Քափսի ժամանակ , ուրիշ շատ միրուած է իր գիւղնագիտական արտակարգ սովորութեանը համար :

Պատուուած էր Շիր Խուրցիս կարմիր ժապաւէնով և Զրդ աստիճան կանոնչ ժապաւէնով , Մէջտիյէ Զրդ , Օսմանլիչ Զրդ . Մօնթէնէկրո Տանիէլո պատուանշանին Յրդ աստիճանով , Շրվալիէ Տէլլա Քուռօնչ ա'նթալիս , Մէնթ էսթանիսալա Ռուսական Յրդ աստիճան , Քրուտ Բուժ ար Ռիւսի , եւլն , եւլն :

Անդամ էր Société de Nofrage de Baltique և de la société de Croix Rouge de Russie.

Գրիգոր Եղիսական իշխաններու և պետական անձնաւորութեանց հետ լաւ յարաբերութիւններ ունենալով կրցած է օգտակար համդիսան իր համայնքին :

1863ին Գաւառական ժողովոյ անդամ , առան մ'ալ Քաղաքական ժողովոյ անդամ և Աստիճանպետ , նաև Բարեգործական Միութեան կեղրանական վարչական ժողովոյ անդամ էր :

Անք եկեղեցակար ու բարեպաշտ , շուրջառ և շամթաթեագ նուիրած է Գայդիէ եկեղեցւոյն և ի յիշաաակ իր Հնագանդ աղջկանը Զ գեղեցիկ պատկերներ շնել տուած է : Մարմնայի եկեղեցին նորոգած և եկեղեցական պիտոյքները հոգացած է :

Հնագէտ ու հետաքրքիր՝ իր տան մէջ ճոխ թանգարան մը ունէր :

Մեր անձնական մէկ տեսակցութեան մէջ կեանքէն ձանձրացած էր , հիւանդ էր և բան չէր կարով ուտել , կեանքը դամն էր իրեն համար հակառակ իր ճոխութեան , մանաւանդ իր աշքերը լիցան երր յիշեց իր վաղամեսիկ աղջիկը : Կը խորհէր նոր կտակ մ'ալ ընել ի նպաստ Հայ որբերու Հ . Բարեգործական Բ . Միութեան ձեռքով ու որպէս զի հաստատուն հիմերու վրայ դրուի , Ֆրանսային բերել տուած էր ժա-

Լոյս Տեսաւ ≡ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ≡ Ս. Եւ Բ հատաները
Գին 60 դր. Կազմուած՝ 75 դր.

«ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ»ի սոյն երկու հատորներուն մէջ ամփոփուած են 116 Հայ երեւելիներու կենսագրութիւններ և 300ի չափ լուսանկարներ, ձեռագիրներ, գրութիւններ, նմանահանութիւններ. և ան. և լն. :

«ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ»ի Գ. և Դ հատորները պրակ առ պրակ լոյս կը տեսնէ ամէն ամիս 1912 Յունվար 15ն սկսեալ, Կարելի է բաժանորդագրութիւն սոյն երկու հատորներուն 54 դր. Թուրքիայ իսկ 60 դր. արտասահմանի համար կանխիկ վճարելով:

Խւրաքանչիւր պրակը կը ծախուի 100 փարացի: Դիմել կ. Պոլիս հրատարակին Վ. և Պ. Զարդարեան եղբարց, Գահիրէ հեղինակին Վ. և Պ. Զարդարեանի (Ապա իւլ Ազիդ էլ Թավաշի փողոց թիւ 5) և կամ Սուրբէն Զագմազնեանի Քափէ Շիշա:

Ալէքսանտրիա՝ Յ. Ղազիկեանի և Օ. Գափանճեանի: Պոլիսը՝ Լ. Օտապուշեանի:

ՄԵՐ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ

		Դր.
156.	Գեր. Վահրամ Եպս. Մանկունի	4 հատոր
157.	» Եղիշէ Մ. Վրդ. Դալֆաեան	Գ. և Դ. » .
158.	» Սարգս Վրդ. Ամէմեան Երւանդէմ	4 » .
159.	» Աշոտ Վ. Սարգիսեան Երւանդէմ	4 » .
160.	Արժ. Հմայիակ Քն. Վարժապետան Մարաշ	Ա. և Բ » .
161.	Տեարք Խաչատր Գանգաշեան Երւանդէմ	4 » .
162.	» Քերովբէ Փափագեան Ատանա	4 » .
163.	» Բիւզանդ Խոշեան Օրսու	Բ » .
164.	» Գրիգոր Ներսէսեան Բրօլիակնա	Բ, Գ. և Դ. » .
165.	» Երուանդ. Ասատր Տէօվբէկ	Գ. » .
166.	» Խաչիկ Գէորգեան Պոլիս	4 » .
167.	» Կ. Տէր Աւագեան Պրիտճօրդ	Ա. և Բ » .
168.	» Նշան Ղուկասեան Պոլիս	4 » .
169.	» Աշոտ Տամիկամեան »	4 » .
170.	» Գրիգոր Աքարեան »	Գ. և Դ. » .
171.	» Մինաս Մալեան Գահիրէ	Ա. և Բ » .
172.	» Ստեփան Տամատեան Հելիօրօի	Ա. և Բ » .
173.	» Արտաշէս Նետուրեան Գահիրէ	Ա. և Բ » .
174.	» Ներսէս Նետուրեան Գահիրէ	Ա. և Բ » .
175.	Ա. Քիրիշճեան Գահիրէ	Ա. և Բ » .
176.	Յավհաննէս պէյ Մատթէոսեան Գահիրէ	4 » .
177.	Կարապետ էֆ. Մատթէոսեան Գահիրէ	4 » .
178.	Վահէ Վարժապետան Հավէջաստան Տիտէ Տավուս	4 » .
179.	Պետրոս Վարժապետան Հավէջաստան Ամփի Ազակա	4 » .
180.	Յովհաննէս Աէքաչնեան Օմոուրման Սոււսան	4 » .

14,868

ՎՐԻՊԱԿ. Յիշատակարանին 22րդ թիւին կողքին վրայ մեր կամքէն անկախ պատճառներով եղած զիրակները կ'ուղղենք:

Գահիրէէն 8. Յովհաննէս Աղմամեանն է որ 2 օրինակ Յիշատակարան նուիրած է մին Վանաց երամեան Վարժարանին և միւսը Կառուց անապատի վանքին:

Վճարող բաժանորդներու ցանկին մէջ փոխանակ Դաւիթ Ծ. Վրդ. Տէտէսեանի սիրտի ըլլայ Դաւիթ Ծ. Վրդ. Տէրտէրեան: